№ 69 Մայիսի 9 (21) 1879 Մայիսի 9 (21) № 69

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնակոչ պրոկուրօրներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր—Արտաքին տեսութիւն։ Բէլգիա։ Ամերիկա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԻՆՔՆԱԿՈՉ ՊՐՕԿՈՒՐՕՐՆԵՐ

Ներկայ յօդուածով անհրաժեշտ ենք համարում մեր ընթերցողների ուշադրութիւնը դարձնել հետևեալ փաստի վրա։

Բարձրագոյն վարչութիւնը գիտենալով, որ իր վարչական բաժինների միջոցով միշտ չէ կարող իմանալ ժողովուրդի պէտքերը, անհրաժեշտ համարեց հաստատել մի քանի հասարակական հիմնարկութիւններ, որոնց միջոցով ժողովուրդի զանազան դասակարգերը կարողանային արտայայտել իրանց պէտքերը։

Որովհետև ժողովուրդի զանազան դասակարգերի ներկայացուցիչներին աւելի լաւ յայտնի են իրանց դասակարգի պէտքերը, վարչութիւնը նրանց միջոց է տուել ցոյց տալ դրանց և մի և նոյն ժամանակ այդ պէտքերին բաւականութիւն տալու իրաւունքը ինքն է պահել։

Այնուամենայնիւ մեր հասարակական հիմնարկութիւնների մէջ, օրինակ դումայում և ազնուականների ժողովում, այսպիսի անձնաւորութիւններ են գտնվում, որոնք չեն կարողանում ընտելանալ ինքնավարութեան գաղափարին և միշտ մի և նոյն բանը կրկնում են. «կառավարութիւնը թոյլ չէ տայ. այդ օրինական չէ։»

Չը կամենալով նկարագրել այդ երևոյթի մանրամասնութիւնները, մենք կը բաւականանանք միայն մի քանի փաստեր առաջ բերելով։

Օրինակ ազնուականների ժողովի մայիսի 2-ին կայացած նիստի ժամանակ այն միտքն էր յայտնված, որ օրինական չէ կամաւոր վճիռ կայացնել ազնուականների երեխաների զարգացման և կրթութեան գործի համար հարկաւոր եղած տուրքը բաժանելու մասին, մինչդեռ նոյն նիստի ժամանակ մի օրէնք կարդացվեցաւ, որ ազնուականներին տալիս է այդ իրաւունքը։

Երկրորդ օրինակ. քանի որ Թիֆլիսի քաղաքային դուման դժուարանում էր քաղաքագլխի պաշտօնի համար արժանաւոր անձնաւորութիւն ընտրել, դումայի մէջ այնպիսի մարդիկ էին գտնվում, որոնք դումայի նիստերի ժամանակ ասում էին, որ եթէ շուտով քաղաքագլուխ չընտրվի, կառավարութիւնը ինքնավարութեան համար մեզ անընդունակ կը համարի և կը խլի մեզանից այդ իրաւունքը։

Այդպիսի անձնաւորութիւններին մենք անուանում ենք ինքնակոչ պրոկուրօրներ և խընդրում ենք դրանց չը շփոթեցնել մարդկերանց անպէտք խստութեամբ, որ ոչ ոք չէ պահանջում։

Մ. Բ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

1 մայիսի

Պարզութեան հետ նաղելութիւն, պարկեշտութեան հետ վստահութիւն, համեստութեան հետ վեհանձնութիւն, չքեղութեան հետ չափաւորութիւն, փափկութեան հետ աշխատութիւն, վայելչասիրութեան հետ խնայողութիւն, պատասխանատուութեան հետ առաքինութիւն, գործնականութեան հետ իդեալականութիւն, կրօնասիրութիւն, հիւրասիրութիւն, հայասիրութիւն և հայրենասիրութիւն—ահա այն ազնվական յատկութիւնները, որոնց մէջ ծնվում է, ապրում, կրթվում, աճում, ծերանում, խրատում և մեռնում հայ օրիորդը, կինը և մայրը, ահա Հայաստանի պահած այն հոգեկան գանձը, ընտանեկան սուրբ խմորը, աստուածային կրակը՝ հայ կինը, որի ուժով պահել են հայերը իրանց ցեղական առանձնայատկութիւնները, ազգային և պատմական ազնվութիւնները, ժողովրդական հոգին և բնաւորութիւնը՝ ընդունակութիւնը, տոկունութիւնը, հաստատ բարոյութիւնը, յարատևութիւնը, կամքը և անսպառելի էներգիան դարերի ճնշման տակ, աշխարհակալների դղրդմանց մէջ։ Հայը, մնացել է անսասան հայ, ասում եմ, միայն օջախի, ընտանեկան կեանքի, կնոջ տան մէջ ունեցած ինքնուրոյնութեան, կատարելութեան, սրբութեան և ինքնավստահութեան շնորհիւ։

Կայ արդեօք մի ինչ սորա նմանող Թիֆլիսի հայ ընտանեաց մէջ, հեռու սրբապղծութիւն. Թիֆլիսցի կինը չունէ ոչ հիմունք և ոչ կանոն, ոչ գոյն և ոչ ուղղութիւն, ոչ լեզու և ոչ ազգութիւն, ոչ տիպ և ոչ իդէալ. նա բնութեամբ ոչ ազամարդ է և ոչ կնամարդ, ազգով ոչ հայ և ոչ վրացի, ոչ ռուս և ոչ եւրօպացի. նա մի անիծեալ դև է, մի այլանդակ հրէշ, որի ծնունդը ևս իր բոլոր էութեամբ և յատկութիւններով այլանդակ է և հրէշական։ Վատորոշ Թիֆլիսցի չէ այն մայրը, որը պատասխանում է ամեն վստահութեամբ արտասահմանում սովալլուկ միակ որդուն. «Ց.—Ջան եթէ իմ որդին ես, կամ պիտի սովից մեռնես օտար երկրում, կամ թէ մարդ դառած յետ գաս քո հայրենիքը»։ Եւ այժմ այդ կրթվի հայուհու որդին իր ազգի պարծանքն է Եւրօպայի ազատ կենտրոնում, փայլելով այնտեղ դիտնականի ասպարիզով. Թիֆլիսցի չէ նմանապէս այն քաջահոգի մայրը, որը իր փոքրիկ մանուկների թիկը բռնած ընկնում է ռուսաց հրամանատարի կառքի առաջը և հարցնում. հայ է արդեօք հրամանատարը և երբ հայազգի գեներալը պատասխանում է դրականապէս, արի կինը արտասանում է յանդգնարար. «ոչ, ոչ դու հայ չես, եթէ հայ լինէիր Հայաստանը անտէր թողած յետ չէիր դառնայ քո երկիրը» և այս ասելով դարձնում է գեներալից երեսը անվեհեր կինը ձգելով նորա վրա արհամարհական հայեացք։ Թիֆլիսցի չէ ևս այն մայրը, որը լսելով իր փոքրահոգի որդու յուսահատական գանգատը հայի ներկայի և ապագայի վերաբերմամբ բարձրացնում է ձեռքը երկինք, ասելով ներշնչված. «տես որդեակս այն աստղերը, տես բոլորը ինչ քո գըլխին է և ինչ քո չուրջը, չէ որ այդ ամենը ստեղծել է Աստուած մի յայտնի նպատակով. նոյն Աստուածը եթէ չունենար ևս մի որոշ նպատակ, մի նպատակ պարգևելու հայ ազգին մի օր մի լուսաւոր ներկայ, նա երբէք չէր հանի Հայաստանը «ընդ հուր և ընդ ջուր» և չէր հացնի Հայկի սերունդը մինչև մեր դարը. ունեցիր հաւատ, ասում էր կրօնասէր հայուհին, մի ազգ որ չունէ հաւատ, նա չունէ ներկայ և չունէ ապագայ։» Այս ամենը, կրկնում եմ, խորթ է Թիֆլիսցու կնոջ համար, որը ծնվում է հաշիւների մէջ, ապրում խաբէութեան և մեռնում մոլութեան գրկում. կարելի է արդեօք տասակի ծառից ապասել թուզ...Ո՛ի զուր քո աղաղակը խեղճ վանեցի մանուկ, ի զուր քո հրաւէրը օգնել քեզ լուսաւորելու. քարեր և ապառաժներ աւելի հեշտութեամբ կարող են շարժվել, քան թէ Թիֆլիսցի օրիորդը կարող է ոգևորվել մի վսեմ հոգով և մեկնել քեզ համար իր ձեռքը նուվիրաւութիւններին, նորա ձեռքը ծառայում է իրան միայն անարատ ամուսիններ որսելու համար...

Բայց բարեբաղդաբար դաւառացի հայուհին չէ ճգտում հետևել իր անարժան Թիֆլիսցու քրոջ օրինակին, նա կատարում է ինչ հնարին է, նա տալիս է ինչ կարող է. Դավալու գիւղից նա ուղարկում է իր եղբօրը և մարդուն մի չարաթ ճանապարհ հեռու մշակութիւն անելու, ողորմութիւն մուրալու ու նորա բերածով փոխանակ իր մերկութիւնը ծածկելու, զաւակների սովը յագեցնելու, նա նուէր է տալիս Հայաստանի ապագայի, նորա մանուկների բարօրութեան աւելի քան 400 ր.։ Պետրովկի, Դերբէնդի, Բաքուի, Ղզլարի, Երևանի և միւս տեղերի հայ կինը իր ամուսնի սերը դէպի իրան չափում է միայն նորանով թէ որչափ գումար կարող է նա անօրինել նորա մատակից, իսկ Ախալցխայի օրիորդը ոգևորվում է աւելի ևս, միայն Թիֆլիսի հրէշական արարածի համար չը կայ ոչինչ ոգևորութիւն, ոչինչ համակրութիւն, ոչինչ կարեկցութիւն, ոչինչ զգացմունք. ինչ դժոխային սերմ...

Ախալցխայի օրիորդը, ասում եմ, իր բոլոր արժանալից քոյրերից էլ աւելի յաջողակվեց. նա վայր դցեց իր բան ու կարը, իլիկ ու ճախարակը, կուժ ու տաշտը, տուն ու սարքը, վայր դցեց նմանապէս մարդկանց աչքից իրան դարեր թաղցնող նահապետական ծածկոցը՝ էչարմը և կարծես մի կախարդական զօրութեամբ այդ, ըստ երևոյթին թոյլ, դանդաղաշարժ, անխօս և անվեղար հայուհին հոգի ստացաւ, լեզու առաւ, աշխոյժ գտաւ և դուրս գալով բեմ իբրև մի ներշնչված դերասանուհի, մի գիւթական յաւերժահարս, սկսեց հիացնել խուռը համդիսականներին իր բեմական ճարպիկութեամբ, վստահութեամբ, ընականութեամբ և ամենաչքեղ մանիերներով. էլ աչքիդ չէիր հաւատում որ դա նոյն հայուհին է, որի բանւոր ձեռքերը խորթ չեն մինչև անգամ բահ բռնելու և կացին բանացնելու հարկաւոր ժամանակ իր տնտեսական պէտքերի համար. չէիր հաւատում որ դա նոյն հայուհին է, որը կռնները յետ ծալած երբեմն ամբողջ օր կանգնած է լինում խոհանոցում կրակի և ծուխի առաջ աչքերը մաչելով, այժմ այդ բանւոր հայուհին այդչափ նաղելի է, այդչափ շնորհաչուք, այդչափ աքանչելի է բեմի վրա.... Խօսքս այստեղ մի ներկայացման վրա է, որ տեղի ունեցաւ անցեալ երեկոյ զինուորական կլուբում մեծ. պ. Գեղամեանի, տիկ. Սամուէլեանի և օր. Զօմարեանի մասնակցութեամբ յօգուտ «Արարատեան ընկերութեան»։ Պիեսայի նիւթը վեր էր առած չքաւոր հայի կեանքից, որ ծանրաբեռնված մի բազմագլուխ ընտանիքով, մաքառում է ամեն տեսակ դժուարութիւնների հետ իր սովամահ մանուկների գոյութիւնը պահպանելու համար, բայց չը կարողանալով յաղթել այդ դժուարութիւններին, չը կարողանալով մի բոպէ անդամ տեսնել կուշտ իր թշուառ որդիքներին, ինքնասէր հայը չէ դիմանում այդպիսի անտանելի դրութեան և թոյն խմելով վերջ է տալիս իր բարոյական չարչարանքին, արտասանելով հոգևարքի մէջ. «հայ մարդ, տես աղքատի վերջը և արհեստ սովորէ, ահա մեռնում եմ, թող քեզ արհեստը փրկէ...» որ տաճկերէն խօսքերով ասվում էր զէնիաթ—զէնիաթ, վատորոյ և ողբերգութիւնը կոչվում էր «Զէնիաթ—Ղէնիաթ» որի չնորհալի հեղինակը նոյն պ. Գեղամեանն էր Ախալցխայի այժմեան քաղաքագլուխը։ Որչափ ախորժելի չէր ինձ անձնականապէս, տեսնել ողբերգութեան վերջը այդչափ փոքր հոգի ինքնասպանութեան օրինակով, որի համար դիմացկան հայ մարդը ամենաքիչ ընդունակ է, նոյնչափ անասելի հաճելի էր տեսնել մի ներկայացում բեղական կեանքից, տեղական լեզուով, տեղական չորերով և տեղական թարմ ու աշխոյժ ոյժերով, մանաւանդ որ բոլոր խաղը անմեղ էր, էլ չասելով մեծ. տիկնոջ և օրիորդի մասին, որոնց վիճակված էր մի քանի անդամ գտնվել միայնակ բեմի վրա և խօսել իրանց մեծալօգները ամենամեծ տաղանդով։ Իսկ նոցանից մէկը երբ դարձաւ հանդիսականներին ասելով. «ամեն մայրեր, ամեն եղբայրներ, եթէ դուք մարդիկ էք, եթէ մարդու սիրտ ունէք՝ հասկացէք ձեզ նման մարդու վիշտը, նայեցէք մի թշուառ հայի նօթի մանուկներին և տեսէք նոցա աղի արտասուքը մի կտոր չոր հացի համար,» նա այնչափ անկեղծ զգացմունքով և ազդու շեշտերով արտասանեց այդ խօսքերը, որ ինքը յայտնեց իր երեսի վրա հոգեկան յուզմունք և վրդով և սարսուռ դցեց լսողի երակները։ Երևի մեծ. օրիորդը այդ ժամանակ մտքով թռել էր Վանայ լճի ափերը, ուր տեսնում էր Հայաստանի որբ մանուկներին....

Գրիգոր Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

29 ապրիլի

Սրանից 15 տարի առաջ Ալէքսանդրապօլում գոյութիւն ունէր 20 անդամներից կազմված մի ընկերութիւն, որի բարեսիրտ անդամները ամսական մի որոշեալ տուրք վճարելով, գիտաւորութիւն ունէին գոյացած գումարով աւերակ եկեղեցիներ և վանքեր վերանորոգել։—Երիտասարդ անդամները մեծ ջերմեռանդութեամբ շարունակելով ընկերութիւնը մինչև 76 թուականը, 600 ռուբլի փող ունեցան, որ զանազան օգտաւէտ միջոցներով շահեցնում էին։—Հայց տարաբաղդաբար չը գիտեմ ինչ պատահեց, վերջին տարիներս ընկերութիւնը քանդվեց և անդամները ցրվեցան։

Թէև ընկերութիւնը քանդվեց, բայց ընկերութեան 600 ռուբլի գումարը մինչև այսօր գտանվում է մի հոգևորականի և մի աշխարհականի մօտ, որոնք լինելով յիշեալ ընկերութեան անդամներ, հայրական քաղցր հոգատարութեամբ պահում, պահպանում և շահեցնում են գումարը։—Թէև շատերը բամբասում են այս երկու պարոններին, թէ սրանք օգուտ քաղելով ընկերութեան ցրված անդամների անտարբերութիւնից, քիչ ժամանակից յետոյ յիշեալ գումարը ուղղ կը շինեն, շատերն էլ կարծում են թէ, շինել, պրծել են և 600

ռուբլուց մի կոպէկ չէ մնացել։ Բայց ես դեռ էլի յոյս չեմ կտրում և ընդհակառակը համոզված եմ, որ 600 ռուբլին այժմ 700, 800!!! դարցած կը լինի։

Ես յոյս ունեմ, որ տէր հայրս այս նամակը կարդալուց յետոյ, անմիջապէս կը հրաւիրէ իր ընկերին էլ, լաւ հեռատեսութեամբ կը խորհեն և ժողովրդի բամբասանքից իրանց ազատ կացուցանելու համար, յիշեալ գումարը կը նուիրեն կամ «Ղարատեան ընկերութեան» և կամ մի այլ ազգատ դպրոցի։

Իսկ ի հակառակ դէպս, ես իմ հետևեալ նամակովս կը բացատրեմ թէ ովքէ է այդ քահանան եւ նորա ընկերը, որոց մօտ այսքան ժամանակ յիշեալ ընկերութեան 600 ռուբլը մնում է անգործ և ինչո՞ւ ոչ մի բարի նպատակի չէ ծառայում։ Ազ լինի՞ այդ պարոնները կարծում են թէ, ոչ ոք այդ ընկերութեան մասին տեղեկութիւն չունի և այդ պատճառով լուռ ու մունջ սպասում են, որ ժամանակի մոռացութեան տակ կորչի անհետանայ։ Ա՛երջապէս, թէ այսպէս և թէ այնպէս երկար չի տևի, այս հարցն էլ կը պարզվի։

Ալէքսանդրապոլցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Դիլիջան, 2 մայիսի

Ղազախ գաւառի գիւղերից՝ Դիլիջանը առաջին անգամ զգաց «Արարատեան» ընկերութեան օգտաւէտութիւնը։ Անցեալ ամսում մի ցուցակով ես կարողացայ այդ զգայուն պարոններից նոյն ընկերութեան օգտին ժողովել 52 ր. 45 կ., որ նամակիս հետ մատուցանելով ձեզ, խնդրեմ փողը հասցնէք ըստ պատկանելոյն, իսկ նուիրատուների անուններին տեղ չնորհէք ձեր պատուական «Մշակ» լրագրում։ Դրանք են. Արտաշէս Ռոստոմեան 3 ր., Յակոբ Շահնազարեանց 1 ր., Յովակիմ Բոզեանց 1 ր., Կարապետ քահանայ Թումանեանց 1 ր., Աւետիք Անանեանց 1 ր., Կարապետ Վարշամեանց 1 ր., Սարգիս Մխիթարեան 1 ր., Սարգիս Պապեան 1 ր., Յարութիւն Անանեան 1 ր., Ադամ Տէր-Կարապետեան 1 ր., Աթաբէգ Մելիքսէթեան 1 ր., Մարտիրոս Յարութիւնեան 1 ր., Բարսեղ Մովսէսեան 1 ր., Դանիէլ Դաւթեան 1 ր., Լազար Տէր-Մովսէսեան 2 ր., Յոհաննէս Մարտիրոսեանց 2 ր., Յոհաննէս Վարդանեան 1 ր., Ներսէս Աղաւելեան 1 ր., Յոհաննէս Դանիէլեան 1 ր., Յարութիւն Դանիէլեան 1 ր., տ. Մարիամ Դանիէլեան 1 ր., տ. Սոփիայ Դանիէլեան 1 ր., Աղէքսանդր Հայրապետեան 1 ր., տ. Եղիսաբէթ Մամեան 1 ր., խաչատուր Մատինեան 2 ր., Գրիգոր Յոհաննէսեան 1 ր., Աստուր Սիմէոնեան 1 ր., Բաբի Աղասարեան 50 կոպ., Մկրտիչ Դաւթեան 1 ր., Մարգար Ասլանեան 1 ր., Բէգլար Մարտիրոսեան 1 ր., Ստեփան Բաղալեան 1 ր., Վարդան Բաղալեան 1 ր., Մարտիրոս Բաղալեան 1 ր., Աղէքսանդր Մելիքեան 1 ր., Աղէքսանդր Ասլանեան 1 ր., Յովսէփ Ասլանեան 1 ր., Յակոբ Մամիկոնեան 1 ր., Աբրահամ Ամիրջանեան 1 ր., հացագործ Յովսէփ 1 ր., Պետրոս Վարդանեան 1 ր., Յոհաննէս Կոխլիկեան 1 ր., Աստուածատուր Դավթեան 1 ր., Գրիգոր Խաչատուրեան 1 ր., Յոհաննէս Գուլզատեանց 1 ր., Սողոմոն Տէր-Մելիքսեթեան 50 կոպ., Ասրի Վարդանեան 60 կ., Ղուկաս Դաւթեանց 60 կ., Յոհաննէս Ջանվելեանց 50 կ. Առաքել Նիկողոսեան 25 կ., Յովսէփ Առաքելեան 50 կ.։ Բացի այս գումարը ժողովված է նաև 8 ր. որ գտնվում է պ. Մկրտիչ Ղարախանեանցի մօտ. պ. Ղարախանեանցը մտադիր է շարունակել դարձեալ նուիրատուութիւնքը, որոց հետ նա կուղարկէ ձեզ վերջում իր բոլոր ժողոված գրքերը։ Յիշեալ անունների ցուցակից Դիլիջանին ծանօթ անձը կը տեսնի արդէն նրանց մէջ այսպիսի չքաւոր նուիրատուների անուանք ես, որոնց համար իրանց նուիրած մի ռուբլին աւելի մեծ նշանակութիւն ունի, քան հարուստի համար իրանց հազարները. այդպիսիները արժանի են խորին յարգանքի. մի և նոյն ցուցակում գտնվում են այնպիսի մի մի ռուբլի նուիրող հարուստներ էլ, որոնք միանգամից հազարներ մսխել իրանց շռայլութեան համար առ ոչինչ են համարում. այդպիսի հարուստներից մինն էր արգելք եղողը, որ իր հետևեալ անբաղաքավարի արարքով եթէ չը յուսահատեցնէր մեզ, գուցէ մեր նուիրատուների թիւը հարիւրներից անցնէր։ Ցուցակը կազմած, ես դիմում եմ հանդիպողիս. առաւել ես մեծանում է իմ ոգևորութիւնը երբ առաջին հանդիպող չքաւորները ստորագրում են մի մի ռուբլի։ Սրանից յետոյ մօտենում եմ Դիլիջանի ամենահարուստ պ. Ց. Ա.-ցին. իմանալով իմ նպատակը նա, յօնքերը ձիթօտ կընճռոտում է և երկար զզվելի խօսքերից յետոյ թքելով հաղիւ դէն է գցում իր մի ռուբլին.... Բայց որովհետև դէն գցածը նուէր է, ապա ես այդ փողը՝ նրանից դուրս գալուց յետոյ, սուրբ համարելով, առ ոչինչ համարեցի և նրա հայհոյանքը։ Այս անցքը ես յիշեցի որպէս պատկերացոյց հայ հարուստի և հայ չքաւորի մէջ։ փառք ուրեմն էլի մեր միջակ դասին, քանի որ նրանք նուիրատուութեան գործում աւելի ես եռանդ և ցանկութիւն ունեն, քան իրանց կեղեքող հարուստները։

Յակոբ Ռոստոմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք ԹԻՖԼԻՍԻ Գիւղատնտեսական ընկերութեան ժողովածուի II հատորը, 1879 թվի «Сборникъ Кавк. Общ. Сельск. хозяйства.»

—

Մայիսի 6-ին ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ռուսաց դերասանական խումբը ներկայացրեց Օստրովսկու «Бѣдность не порокъ» կոմէդիան։ Այդ պիէսան տեսնելով, որի տիպերը արդէն փոքր ի շատէ հընացել են, մարդը համոզվում է թէ ինչ դիւթական ներգործութիւն ունի, ողբան անմահ է իսկական տաղանդը։ Ինչքան անգամ կարդացինք, ինչքան անգամ բեմի վրա տեսանք Օստրովսկու այդ պիէսան, բայց այնու ամենայնիւ նա ամեն անգամ հանդիսականի զգայմունքի վրա խոր տպաւորութիւն է գործում։ Այդ պիէսայում գլխաւորապէս իրանց խաղի վրա ուշադրութիւն դարձրին պ. պ. Անդրէեվ-Բուրլակ և Զէրկասով։ Գեղեցիկ տիկին Վոլգինա շատ համակրական էր վաճառականի աղջկայ դերում։

—

Քանի մի ժամանակ սրանից առաջ մենք յայտնած էինք որ ռուս դասախօսները դիտաւորութիւն ունէին հրաւիրել հայ դասախօսներին, միասին մի խումբ կազմելու, եկող տարուց սկսած դասախօսների ռուս-հայոց մշտական շրջան ԹԻՖԼԻՍՈՒՄ հիմնելու համար։ Մայիսի 4-ին ամառնային կրուժօկում հրաւիրվեցան դասախօսները թւով 11, վերև յիշված խնդիրը քննելու համար։ Կազմվեցաւ մի պատրաստական, ժամանակաւոր յանձնաժողով, որի նպատակը պէտք է լինի մշակել ձեռնարկութեան պրոգրամմաս։ Յանձնաժողովի անդամներ ընտրվեցան. Լ. Մաճալովսկի, Վ. Վարապաև, Ա. Յոհաննիսեան, Գ. Արծրունի և Լ. Մարկով։

—

Պ. Քաթանեանց խնդրում է մեզ յայտնել, որ ապրիլի 29-ին ԹԻՖԼԻՍԻ գերմանական կլուբի դահլիճում տուած հայ ներկայացումից գոյացել է 178 ր. 40 կ. եկամուտ, ծախս եղել է 122 ր. 40 կ., մնացորդ 56 ր. յանձնված է սուրբ Մինասի ծխական ուսումնարանի վարչութեանը։

—

Ստացանք պ. Ա. Գիւլամիրեանցի ԵՐԵՒԱՆՈՒՄ հրատարակած «Բրիչ» վերնագրով գրքոյկը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼԳԻԱ

—

Բէլգիայում մինչև այժմ էլ դեռ հասարակական կարծիքը բացառապէս զբաղված է տարրական ուսման հարցով. անշուշտ, սրանից չէ կարելի եզրակացնել, որ ուրեմն ամբողջ Բէլգիայում ուրիշ առօրեայ հարցեր չը կան. այդպիսի հարցեր, ինչպէս և ամեն երկրներում, շատ բազմաթիւ են, բայց դրանցից ամենահետաքրքիրը և ամենանշանաւորը տարրական ուսման հարցն է։ Մի քանի օր շարունակ լրագիրները անդադար յիշեցնում էին, որ պ. Կրօմբէ այս առիթով պատգամաւորների ժողովում մի նշանաւոր ճառ պէտք է խօսի. մի քանի օրից յետոյ կայացաւ ժողովը, և ամենքը հիացած էին նրա հոյակապ ճառով. այդ ճառը մեծ ազդեցութիւն գործեց ժողովում։ Ամենքին յայտնի է, որ կղերականները ներկայումս զանազան միաբանութիւնների միջոցով են ուսումնարաններ հիմնել, ուրեմն իսկապէս չը կան այնպիսի հոգևոր ուսումնարաններ, որ քուէարկված են 1842 թվին։

Նրանք այժմ կանչում են. «Թող պետութիւնը դուրս կորչի ուսումնարանից». եթէ նրանք կամենում են որ պետութիւնը դուրս կորչի ուսումնարանից, ուրեմն նրանք ի՞նչ են կամենում դնել պետական ուսումնարանների փոխարէն. երևի միաբանութեան ուսումնարանները. մի հարցնող լինի թէ ի՞նչ են այդ միաբանութիւնների ուսումնարանները. այս հարցին պատասխանելու համար մենք մէջ կը բերենք պ. Կրօմբէի ճառը, որի մէջ նա ընդհանրապէս խօսելուց յետոյ, մանրամասն օրինակներ է բերում Տուրնէ վիճակի կղերական ուսումնարանների վերաբերութեամբ։ Նա յիշեց այն քամելի գործերը, որոնք կատարվել էին կրօնաւորների ուսումնարաններում, որոնց մասին նոյն վիճակի առաջնորդը յանդիմանութիւն էլ չէր անում, և օրէնքի հիման վրա հաստատված մի աշխարհական ուսումնարանի վարչութեանը նկատողութիւն անելու ժամանակ, յարգելի առաջնորդը մոռանում էր կղերական ուսումնարանների այն հազարաւոր անկարգութիւնները, որոնց մասին նա շատ լաւ տեղեկութիւններ ունէր. առաջնորդը մերժում էր առաջին հաղորդութեանը մասնակցելու այն երեխաներին, որոնք յաճախում էին աշխարհական ուսումնարանը, բայց բարեպաշտ ուսումնարանի անառակ ուսուցիչները և պղծված աշակերտները արժանի էին մերձենալ սրբութեան սեղանին։

Ատենախօսը յաջորդաբար քննեց այն երեք տարրերը, որոնցից բաղկանում է ուսումնարանը. դրանք են ուսուցիչները, աշակերտները և այն վարդապետութիւնները, որոնք աւանդվում են ուսումնարանում։

Միաբանութիւնների ուսումնարանների աշակերտները, ինչպէս նրանք երևան են գալի հասարակական կեանքի մէջ, նրանք ֆրանսիական արիստոկրատիայի անառակ որդիքն են որոնք ամեն տեսակ անկարգութիւնների հերոսներ են։ Տուրնէի յարգելի պատգամաւորը ասաց, որ մօտա է ընկել արիստոկրատիայի մէջ իրանց որդոց եղբայրական և միաբանական դաստիարակութիւն տալ. բաւական է մի քննող հայեացք գցել ժամանակակից արիստոկրատիայի վրա, որպէս զի լաւ հասկացվի նրա ստացած կրթութեան արժէքը։

Ինչ կը վերաբերի ուսուցիչներին, ոչ յայտնի է թէ որտեղից են նրանք եկել, և ոչ յայտնի է թէ ուր են գնում նրանք։ Մարդ չը գիտէ նրանց ազգութիւնը, և ոչ իսկ նրանց անունը, և կղերականները պահանջում են, որ առանց որ և է երաշխաւորութեան կոյր վստահութիւն ունենան այդպիսի մարդոց վրա։ Եւ եթէ պատահում է, որ դրանցից մէկը գործել է այնպիսի յանցանք, որ մարդս չէ համարձակվում պատմել, նա իսկոյն անհետանում է, և կարելի է համարձակ ասել, որ նա իր չարամտութիւններին գործակից եղբօր մօտ է. նրա փոխարէն գալիս է մի ուրիշը, սա լաւ մարդ է, սա խօ առաջինի պէս չէ, և վերջապէս մարդիկ խօ միշտ միատեսակ չեն լինում...

Գալով այնտեղ աւանդված վարդապետութիւններին....բայց երկար խօսել ինչ հարկաւոր է, բաւական է Տուրնէի վիճակի քրիստոնէականը բանալ, և դա քեզ կասէ բոլորը։

Մարդս այնտեղ ապշած սառոյց է կարում, երբ կարդում է այն ձեռնարկը որ նշանակված է տասս տարեկան երեխաների համար. այդ ձեռնարկի մէջ վեցերորդ պատուիրանքին յարմարեցրած է հետևեալ չը լսված նախադասութիւնը, թէ պէտք է յարգել քահանային և հնազանդվել նրան, մինչև անգամ եթէ նա անառակ կեանքի տէր լինի։

Ամենասիրելի այն ուսուցիչները, այն աշակերտները, և այն վարդապետութիւնները, որոնք կատարեալ պատկեր են ներկայացնում այն բարոյականութեան, որ թագաւորում է կղերական հիմնարկութիւնների մուտաղ սեղանի սրտի վրա։ Ամենասիրելի այն բարոյականութիւնը, որ անբաժան է կրօնից, և որի առաջ պէտք է խոնարհի բոլոր ուրիշ բարոյականութիւն, որովհետև սա միակ է, որ աստուածային է...

Պատուելի ատենաբանը, խօսքը վերջացնելով, հարց առաջարկեց, թէ այսպիսի ուսում ստանալուց յետոյ, ի՞նչ է լինում մարդուս պատասխանատուութեան զգացմունքը։ Նա անհետանում է։ Բայց Բէլգիան երբէք հաւանութիւն չի տայ այս տեսակ բարոյականութեանը, և նրան երբէք չէն կարող ստիպել աստուածպետական կառավարութիւն տալ, որը վաղուց հետէ երազում է կղերական կուսակցութիւնը։

Ճառից յետոյ, ձախակողմեան նստարաններից ականջ խլացնող ծափահարութիւններ էին լսվում։

Դրանից յետոյ Բաստոյնի պատգամաւորը պ. Վան Հօորդ խօսք խնդրեց, և մի քանի խօսքերով պատասխանեց պ. Կրօմբէին։

ԱՄԵՐԻԿԱ

—

Միացեալ Նահանգների նախագահը մերժեց մի բիւդժէտի քուէարկութիւն, որի զօրութեամբ ֆէդերական զօրքեր պէտք է պահպանվէին այն վիճակներում, որոնք մասնակցում են նախագահի ընտրութեանը. քուէարկողները խնդրեցին, որ այդ օրէնքը զօրութիւն ունենայ գոնէ ընտրութիւնների ժամանակ, բայց նախագահը բացէ ի բաց արտասանեց իր վճռական վետօն։

Վաղեմի դէմոկրատները ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում նախագահի բացասութեան վրա, նրանք պարծենում են իրանց ձայների առաւելութեամբը, և հաստատ վճռել են պաշտպանել իրանց քուէարկութիւնը։

Հարաւի նէգրները դէմոկրատների ձայների առաւելութենից սկսել են սաստիկ վախենալ. և եթէ նոր ընտրութիւնների ժամանակ դէմոկրատները դարձեալ առաւելութիւն կազմեն, այն ժամանակ մի սև փոթորիկ է ըսպառնում Միացեալ-Նահանգների ազգային։

Նրանք արդէն խումբ-խումբ դիմում են դէպի Կանադա, այնտեղ, որտեղից Ծերունի Ջօհն-Բրէօնը սկսեց իր կատաղի պատերազմը, որի բարերար հետևանքով նա ազատութիւն շնորհեց միլիօնաւոր ստրուկ նէգրներին։

Հին դէմոկրատները—հարաւի այդ անտանելի հարստահարողները առանց ստրկութեան իրանց բոլորովին առանց բազուկի են տեսնում։ Նրանց բամբակի ու շաքարի եղէգնի լայնածաւալ դաշտերը, եթէ մշակված էլ են, գոնէ օգուտը իրանց գրպանը չէ մնում, ուստի նրանք աշխատում են մի հնար գործ դընել, և ստրկութիւնը կրկին վերականգնել։ Խեղճ նէգրները տեսնելով, որ դէմոկրատները դարձեալ քաղաքական մեծ-մեծ նշանակութիւն են ստանում հարաւում, նրանք էլ ճարահատ սկսում են այս ու այն կանոնները ցրվել։ արդէն հարաւային նահանգներից շատերը զրկվել են հազարաւոր աշխատող բազուկներից. բայց այդ գաղթող ողորմելիները, ինչպէս և ամեն գաղթողներ, ենթարկված են ամենադաժան խեղճութիւնների, նրանք թողել են իրանց հարաւի բարեբեր դաշտերն ու հողերը, և այժմ մատնվել են աւելի խիստ երկրներին արգաւանդ շինել. եթէ սրա հետ միասին աւելացնենք և շատերի անտանելի չքաւորութիւնն ու թշուառութիւնը, այն ժամանակ մենք մի ճիշդ գաղափար կը կազմենք նրանց անգութ վիճակի մասին։

Մի՞թէ, ճշմարիտ, ազատամիտ Ամերիկան պէտք է թոյլ տայ պղծել պատմութեան այն ամենագեղեցիկ երեսները, որ անմահ տառերով արձանագրված է նրա հոյակապ փառքը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

—

Կ. Պոլիս, 25 ապրիլի

Հիշատ է ձեզ երևակայել թէ Սալիզբրիի խօսքերն, զոր այս երեկոյ հեռագիրն բերաւ մեզ՝ «Քանի որ թիւրք կառավարութիւնը այսպիսի դրամական տաղնապ ունի, Ասիական-Տաճկաստանի մէջ բարեկարգութեանց մասին շատ բան մը յուսալու չենք» ի՞նչ տպաւորութիւն արած են Կ. Պոլսոյ Հայերու վրայ. ապշութիւն, զայրոյթ, զզուանք Անգլիոյ նկատմամբ, այս բառերն կը պարունակեն բոլոր մեր զգացումներն։—Լէյարդի Կ. Պոլիս հասնելէն անմիջապէս վերջ Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնէին այս խօսքերն բաւական նշանակութեան արժանի են։—Չեմ ուզեր երկարօրէն բացատրել ինչ որ կը խօսուին այս նիւթերուս վրա, արդէն դիտէք որ մեր ակումբն Անգլիոյ խոստումներն իբր utopie նկատած է. զարմանալի է որ Անգլիա այսքան յամառութեամբ ուզէ իրմէն ցրտացնել Արևելքի քրիստոնեայներն, և կարծեմ յանդգնութիւն մը արած չը պիտի լինիմ եթէ ասեմ որ այս շաբթու վերջ Կ. Պոլսոյ մէջ մի հայ պիտի չը կարենաք գտնել որ համակիր զգացմանց նշոյլ մը ցոյց տայ առ Անգլիա։ Ցուսամք թէ մի օր պիտի գայ որ Անգլիա պիտի զգայ թէ հայ ժողովուրդը այսքան արհամարհանաց արժանի չէր։

Եւրոպայէն մեծ բան մը չը յուսալու համոզումն կընդհանրանայ և յուսամք թէ Էջմիածին ևս ըմբռնէ որ ինքն ալ կոչումն ունի հայ աշխարհի քաղաքական շարժումներու մէջ։ Պոլսեցիք կը կարծեն թէ Էջմիածին հրաշքներ գործելու կարող է. մեք կը հաւատանք որ հրաշք չը կրնար գործել, բայց մեծ օգուտներ կրնայ ընձեռել ազգային դատի։ Այս ընդհանուր շարժումի միջոցին Էջմիածնի պարապ կենալն հանելուկ մը դարձած է, և զայրոյթ կը պատճառէ, և այս զայրոյթի թարգման կը հանդիսանայ «Մասիս» որ այսօր առաջնորդող խիստ կծու յօդուած մը կը հրատարակէ Վեհափառ Հայրապետի քաղաքականութեան նըկատմամբ։ Այս յօդուածը ճարտար կերպով գրուած է, անկողմնակալութեան կերպարանք մը տալու ջանացած է, ի նկատի կառնու Վեհափառ Կաթողիկոսին լրած ջանքերն ազգ. մտաւոր զարգացման մասին և կը պախարակէ Վանուց մտաւորական վիճակն ու քաղաքական ընթացքն. վախենք թէ այս յօդուածը նախաբան մը լինի առ այժմ և իր շարունակութիւնը ունենայ։—Ոմանք հեռուէն Սսոյ կաթողիկոսական խնդիր մ'ալ կը նշմարեն, բայց այս փափուկ վիճակին մէջ Ազգն այնպէս լաւ ըմբռնած է Էջմիածնի կարևորութիւնը որ մտքէ իակ չեմք կրնար անցնել Սսոյ կաթողիկոսական խնդրոյ մը ծագումը։—Եթէ «Մասիս» այս օր բռնկեր է, պէտք է խոստովանել որ կայծը ձեզնից է։ Մեր բարեկամ պ. Ռուսաստանցին «Մասիսի» հետ իր թղթակցութիւնը սկսաւ, շատ ուրախ եմք և թղթատարի յաջորդ օրի կը սպասեմք տեսնել թէ ինչ լուր մեզ Տփխիսէ կուտայ «Մասիս»։ Պ. Ռուսաստանցիի ճարտարութեամբն է որ Էջմիածին քննադատութեան կենթարկուի այսօր։ Զարմանալի թղթակից որոյ գրութիւններն իր կարծածէն աւելի ազդեցութիւն կունենան. Ֆրանսայի հասարակապետական մամուլը 'ի հանդէս կածէ զայն իբր թարգման Ռուսիաբնակ հայերու զգացմանց։ Հանդարտ «Մասիսը» անտի ոգի կառնու Էջմիածինը քարկոծելու։ Պ. Ռուսաստանցին անչուշտ կըմբռնէ թէ այսքան աղմուկ հանելէ վերջ ալ ներելի չէ իրեն լռել կամ դանդաղել գրելու համար։

Գուցէ ոմանք հարցնեն, միթէ հնար չէ Տաճկաստանի գանձային վիճակն բարւոքել, և այնու Հայաստանի բարեկարգութիւններն իրականացնել։—Այս մասին բոլորովին թերահաւատ եմք։ Շատ երկար պիտի լինէր եթէ մի առ մի բացատրենք թէ Տաճկաստանի վաճառականութիւնը օր ըստ օրէ նուազելու վրայ է, թէ ազգային արուեստ ըստուածն հոս բնաւ գոյութիւն չունի, և երկրագործութիւնը ամենաողորմելի դրութեան մէջ է՝ երկրին օրէնքներն, սովորութիւններն ի մահ կը դատապարտեն զարգացման, և է սերմ անտեսագիտական օրէնքներն թիւրաց բոլորովին անծանօթ, և իրենց բառգրքին մէջ ֆրանսացւոց honneteté բառին թարգմանութիւնը չը գտնուիր։ Պէտք է հոս լինել որ համոզուիմք թէ ինչպէս ամեն փոքրիկ գործի մէջ խարդախութիւն և գողութիւն կը տիրէ։ Բայց ամենէն աւելի թղթադրամն է որ ժողովրդի առաջ (իմա քրիստոնեայ ժողովուրդի) կառավարութեան վարկն ի մահ դատապարտեց. տեսանք և խելամուտ եղանք թէ ինչ հնարքներ գործեցին որպէս զի 15,000,000 լիրայի թղթադրամը անարժէք լինի, այսօր մէկ օսմանեան լիրայն 1000-է մինչև 1300 դահեկան կանէ, մինչ 110 դահեկան պիտի անէր, որով կառավարութիւնը փոխանակ 15 միլիոն լիրայի մէկ կամ մէկ ու կէս միլիոն լիրա պարտական կըլլայ։—Այժմ ալ ոչ մէկն թղթադրամ կառնու, կառավարութիւնէն սկսեալ. (միայն կամուրջի անցագինը թուղթ է). բայց կառավարութիւնը կուզէ բան մը ցցնել, իբր թէ ժողովուրդին բարիք մը կանէ, ուստի թղթադրամն անհատներէ նուէր ընդունելով հրապարակի վրայ կայրէ, բայց ինչ ոչինչ գումար։—Սակայն լաւ չեմ գիտեր թէ Ռուսաստանի մէջ նուէր ասելով ինչ կը հասկանաք. օրինակով մը բացատրենք թէ Տաճկաստանի կառավարութիւնը նուէր կամ ողորմութիւն բառով ինչ կըմբռնէ։—Խարբերդէն մի հեռագիր եկաւ Պատրիարքարան թէ՝ տեղական իշխանութիւնը սկսած է թղթադրամ նուէր ընդունել. մի հայ հինգ հատ հարիւրանոց թուղթ կը նուիրէ, սակայն իշխանութիւնը կը պահանջէ որ տասն և հինգ թուղթ տայ. նուիրատուն կը պատասխանէ թէ քանի որ նուէր է ինչ որ ինք կուտայ զայն պարտին ընդունիլ. այս պատասխանին վրայ խեղճ հայը կը ձերբակալեն և ի բանտ կը նետեն։—Դուք կուզէք ծիծաղեցէք կուզէք բարկացէք, Տաճկաստանի մէջ տուրքէն սկսեալ մինչև ողորմութիւնը ըստութեամբ կառնեն, և ամեն առթի մէջ բանտը պատրաստ է։

Սակայն բանտի այսպիսի պարագայներ կը պատահեն որ կառավարութիւնն ինքն ալ կը չուարի թէ ինչպէս անէ. այս կարգէն է Ֆրնուզի վանահայրի բանտարգելութեան խնդիրն։ Ինչպէս նախորդ նամակաւ ասած եմք դա կը պահանջէ Հալէպ երթալ և հոն անձամբ դատուիլ, Պատրիարքարանը չը հաճիր զեպիսկոպոսն կառավարութեան յանձնել։ Այժմ բանակցութիւններն Անգլիոյ դեսպանատան հետ տեղի կունենայ և Պատրիարքարանը հետևեալ պայմաններն կառաջարկէ։

1. Մինչև իրանց հայրենիքն առանց հսկողութեան երթալու ազատութիւն։

2. Առանց բանտարկութեան և ազատօրէն քննուելու թոյլտուութիւն։

3. Իրաւունք ունենալ կայսերական քմիսէրներուն ներկայութեանը կատարուելիք քննութեանց և դատաստանին մէջ խօսելու և ամենայն ազատութեամբ աղքատաց խնդիրներն ու վիճակը ներկայելու։

4. Եթէ այս քննութեանց մէջ հակառակ արդարութեան որ և է կերպիւ յանցապարտ դատուին և վճիռ արուի, իրաւունք ունենալ 'ի Կ. Պոլիս վերաքննութիւն պահանջելու։

5. Եթէ պատժոյ արժանի դատուին, ազգային Պատրիարքարանի մէջ կրեն իրենց պատիժն իբրև եկեղեցական՝ ըստ տրամադրութեան պատրիարքական Պերաթին։

Բնական է որ այս պայմաններն ընդունելութիւն չը գտնեն, զի իրենց արդիւնքն բոլորովին նպաստաւոր պիտի լինեն հայոց. ուստի զարմանք չէ երբ մեր թերթերէն ոմանք կը հրատարակեն թէ Բ. Դուռը ոչ վանահայրը կուզէ, ոչ ալ այս պայմաններն։

Ուրախ եմք որ Պատրիարքարանը արիութեամբ կը գործէ, երբ իր իրաւունքներն հզօր կերպով կը պաշտպանէ։ Նոյնպէս արիութիւն ցոյց տայ, յուսամք, երբ իր յանցաւորներն պատժելու ձեռնարկէ. կը լսեմք թէ Երեմիա եպիսկոպոսն իր պատիժը պիտի կրէ. Կրօնական ժողովոյ որոշմամբ նա իբր եկեղեցական մեղապարտ Կոտուշ անապատն պիտի աքսորուի յապաշխարութիւն։ Ցուսամք թէ այս լուրն ստոյգ լինի։

Երեմիա եպիսկոպոսի ապաշխարանքն կրնայ լաւ օրինակ մը ըլլալ ուրիշ եկեղեցականաց ևս, որք օրինակ առնելու շատ պէտք ունին, մանաւանդ անձնուիրութեան մասին։ Գոհ եմք որ կը գտնուին վարդապետներ որք այդ անձնուիրութեան դասը կուտան իրենց պաշտօնակցաց։ Այդ վարդապետներէ երկուքն հաւանօրէն ամսոյ 28-ին կը մեկնին աստի դէպի Հայաստան բարեկարգութեանց յանձնաժողովներու համար ժողովուրդը պատրաստելու. Գարեգին վարդապետ Սրուանձտեանց, Վանան վարդապետ պարտիզակցի—իսկ աշխարհականներէն ոչ ոք տակաւին որոշուած չէ սոցա հետ երթալու. փող չը կայ։

Այդ փողի խնդիրն որքան արգելք կը մնի ազգային գործոց, և տակաւին ազգային տուրքերն կանոնաւոր կերպով հաւաքելու և արդիւնաբեր անելու միջոց մը չը գտաւ մեր ազգային վարչութիւնը։—Հայ ժողովուրդը որ այնքան ծանր ծանր հարկեր կը վճարէ կառավարութեան անչուշտ պիտի ջանայ իւր կեդրոնական իշխանութիւնը զօրաւոր դրքի մը մէջ պահել, բայց պէտք է որ ազգային վարչութիւնը լաւ կերպով աշխատի։ Հաւաքման համար թէ գաղափար մը ունենաք որ ինչչափ ծանր են կառավարութեան հարկերն սաչափ ասեմ որ Վանայ լճին եղերքն Դատուան հայ աղքատիկ գիւղն տարին միայն 4642 բուռլի տուրք կը վճարէ և այդ գիւղն 68 տուն բնակիչ ունի։

Այսպիսի ծանր բեռներու տակ ընկճեալ ժողովուրդ մը ինչպէս կուզէք որ իրենց զարգացման և բարոյական զարգացման աշխատին, թէպէտ մեծ փափագ ունենան, ուստի զարմանք չէ երբ թերներն բացած կընդունեն իբր առաքեալներ այն երիտասարդներն որք կուգան իրենց ասել թէ ձեր գիւղերու մէջ դպրոց մը պիտի բանամք. խեղճ գիւղացին ապէտ, բայց բնազդում մը ունի թէ դպրոցն ապագայ մը կը պատրաստէ իրեն։—Ամեն անգամ որ Հայաստանի մէջ նախակրթարանի մը բացումի նկարագիրն կը կարդամ անհնար կըլլայ ինձ չը խռովիլ. վերջին օրերս այս քաղցր խռովութիւնն վերատին ունեցայ։

Ահա ինչպէս կը նկարագրէ պ. Մկրտիչ Փորթուգալեան Դատուանի մէջ «Արարատեան» դպրոցի մը բացման պարագայներն։

«Նախ պէտք էր մի վարժատուն. տեղն որոշեցինք, եկեղեցիին քով եղած բացօթեայ տեղն 40 ոտնաչափ երկայնութիւն և 20 ոտնաչափ լայնութիւն ունի։ Մելիքն խոստացաւ որ գիւղացիներն ձրիապէս աշխատեցուն չէնքին համար և գիւղացիներն յօժարակամ և ուրախ սրտով յանձնառու եղան. միայն թէ դերանի և մի վարպետ որմնադրի համար ծախքն կը հարկաւորի. որոշեցինք որ «Արարատեան» ընկերութիւնը միայն 500 դահեկան վճարէ տեղւոյն ստակով։ Մնացած ծախք եթէ լինի, մելիքն և ռեսներն հոգան։—բայց զի Դատուանի մէջ դեռ ցորտ է և գիւղացիներն դեռ չեն կարող վարել իւրեանց եղներ որ լեռներէն քար բերեն չէնքին համար, որոշեցինք որ չինութիւնն սկսի զատիկէն յետոյ։

«Եկեղեցին կարդացունել տուի «Արարատեան» ընկերութեան համար Պատրիարքի հրատարակած կոնդակն. քահանայն ծանուցում արաւ թէ Դատուանի մէջ «Արարատեան» վարժարան պիտի բացուի, տղայ ունեցողներ թող առաքեն. ժողովուրդն միաձայն կ'աղաղակէր «փառք քեզ Աստուած, փառք քեզ որ այս օրին ալ հասանք. Աստուած հաստատ պահէ ընկերութիւնը։»

Ռեսներէն մի ժամանակաւորապէս տուաւ իւր տուն որ աշակերտներն այնտեղ հաւաքուին մինչև որ վարժատունն չինուի։ Չը մոռնամ յայտնել որ վարժարանի փայտեայ չինուածներն յանձնառու եղան ձրիապէս չինել Մելիք Յարոյ և թէ խաչոյ ողք հիւսուութիւն գիտեն։ Առ այժմ երկու սեռէ 83 աշակերտներ կը յաճախեն դպրոցը։»

Այն ժողովուրդը որ երբէք դպրոց չէ տեսած, բայց գիտէ փառք տալ Աստուծոյ իւր գիւղին մէջ դպրոց մը տեսնելուն առթիւ և զոհողութիւններ անել դպրոց կանգնելու համար, այդպիսի ժողովուրդ յուսահատելու չէ։

Պիտի գրեմ հայոց խնդրոյն վրա, բայց ամեն ատեն մէյմէկ արդելք կելլէ, ահա կէս գիշեր է, արտաքոյ կարգի լոյս մը կը պատէ սենեակս, հրդեհն մեր թաղէն քիչ հեռու կը լափէ հայոց տուներն, Օրթագիւղ Տէրէյի փողոցն կայրի կաթոլիկներու եկեղեցին և դպրոցն կազատի, բայց հայոց մեծ տուներ մոխիր կը դառնան, թող կաթոլիկներու խնդիրն ուրիշ աւուր մնայ, մենք հրդեհին երթանք որ նա մեզ չը գայ։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Հավասի» ընկերութեանը Տրնօվոյից հեռագրում են, որ իտալական կառավարութիւնը յանձնեց իր հաւատարմատարին կանոնաւոր ճանաչել իշխան Բատտենբերգի ընտրութիւնը։ Միւս կողմից հաւատացնում են, որ Բ. Դուռը ընդէմ չի լինի այդ ընտրութեանը։ Թիւրքաց հաւատարմատարը հրաման է ստացել կառավարութենից ստորագրել բոլգարական ազգային ժողովի բացվելու և փակվելու պաշտօնագիրը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս դոկտոր Տէնդալ հրատարակեց, որ նա կատարելագործել և գործադրելի է արել էլեկտրական լուսաւորութիւնը։ Արդէն երևելի Ֆարադէյ գիտնականի գիւտից յետոյ ամենքը հաւատացած էին, որ այդ գիւտը գործադրելի կը դառնայ, այդպէս էլ եղաւ։ Դոկտոր Տէնդալ ասում է, որ անկարելի է այդ լոյսից օգուտ քաղել մինչև ճառագայթները չը նուազեցնվեն մի գնտաձև ապակեայ ծածկոցով, իսկ եթէ հասարակ կերպով գործ դրվի այդ լոյսը, նրա չափազանց փայլից աչքերը կարող են վնասվել։ Պ. Տէնդալ չէ կարծում, որ այդ լուսաւորութիւնը այնպէս մրցութիւն անէ գազային լուսաւորութեանը որ նրան բոլորովին մեռցնէ։ Նա ասում է թէ ինչպէս որ շոգին չը մեռցրեց ձիերին, այնպէս էլ էլեկտրական լուսաւորութիւնը չի մեռցնի գազային լուսաւորութիւնը։

***

Ստացանք Կ. Պոլսում տպված մի ֆրանսերէն բրոշիւր «L'article 61 du traité de Berlin» վերնագրով։ Դա ժողովածու է այն բոլոր գանգատների, որոնք թիւրքիահայ գաւառացի հայերը ներկայացրին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին 1878 թվի նոյեմբեր ամսից, մինչև յունվար ամիսը 1879 թվի։ Գաւառացի թիւրքիանակ հայերի դրութիւնը սարսափելի անմխիթար գոյներով է նկարագրվում այդ գանգատների մէջ։

***

«Գէորգ Ռօլէստոն» թարգմանած վէպը ամբողջութեամբ կարդալուց յետոյ, կարող ենք ասել որ թարգմանողը, պ. Առաքելեանց, շատ գեղեցիկ ընտրութիւն է արել իր թարգմանութեան համար։ Ափսոս, որ լեզուն շատ անհնակ է և խոշոր լոգիկական սխալներ կան ոճի մէջ։ Խորհուրդ ենք տալիս հայ պատանիներին կարդալ այդ գրքոյկը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 5 մայիսի։ Պատասխանելով «Московскія Вѣдомости» լրագրի այն հարցին, որի մէջ խօսված է իշխան Բիսմարկի արած մաքսային վերանորոգութիւնների մասին, և գլխաւոր ուշադրութիւնը դարձնելով պատերազմական մաքսերի վրա, «Nordd. Allg. Ztg» լրագիրը գրում է, որ ոչ թէ Ռուսաստանի տնտեսական ծաղկած վիճակն է մեր քունը կոտրում, այլ Գերմանիայի գիւղատնտեսական բարօրութեան անկումը. մեր առևտրական յարաբերութիւնները միակողմանի են։ Գերմանիան ընդունում է Ռուսաստանի մթերքը առանց մաքս վճարել տալու, Ռուսաստանը դժուարացնում է Գերմանիայից բերված ապրանքների մուտքը ծանր մաքսերով. վերջին տարիների ընթացքում ռուսաց մամուլի մէջ մենք Ռուսաստանի և Գերմանիայի մէջ ոչինչ մտերմական հետք չենք նշմարում, որի մասին խօսում է «Моск. Вѣдом.» լրագիրը. մենք կարծում ենք որ միայն Գերմանիան է պահել այդ բարեկամական յարաբերութիւնները, առանց արձագանք գտնելու ռուսաց լրագիրների կողմից։

ՐԻՈՆ, 7|19 մայիսի։ Լուգանօ քաղաքում մահուան պատիժը վերականգնելու առիթով եղած հանդիսաւոր քուէարկութեան ժամանակ 166000 հաստատող և 132000 բացասական ձայներ ստացվեցան. Ժիւրայի և Վալլիսի մէջ քուէարկութեան հետևանքները դեռ յայտնի չեն։

ՕԴԷՍՍԱ, 6 մայիսի։ Այսօր ժամը երկուսին Բոլգարացոյ իշխանը հասաւ այստեղ։ Երեկոյեան նա կուղևորվի Վիէննա։

Կ. ՊՕԼԻՍ, 7|19 մայիսի։ Սուլթանը արևելեան Ռումելիայի համար հաստատեց օրգանական կանոնադրութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի։ Իշխան Գորչակովի առողջութիւնը վերականգնեց։ «Agence Russe» հաղորդում է, որ Թագաժառանգը համաձայնեց կնքել Զէրնօգորիայի իշխանի որդուն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 12 կ., երկրորդ 96 ր. 12 կ., երրորդ 96 ր., չորրորդ 96 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 243 ր., երկրորդ 237 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 87 կ., երկրորդ 94 ր., ոսկի 8 ր. 64 կ.։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ